Գրանք անշուք, աղքատիկ գերեզմանատներ են, ուր այս ու այն կողմում, տնկանոն կերպով փռված են գերեզմանները։ Սովորաբար իրենց ննջեցեալների գերեզմանի վրայ հողաթումբ են կանգնեցնում և մի քար դնում, իսկ հարուստները կանգնեցնում են՝ մեծ և շքեղ քառակուսի քարեր զանազան քանդակներով նկարազարդված։ Ընդհանրապես միևնույն գերդաստանի անդամները միմեանց մոտ են թաղում։

ՆՇԱՆԱՒՈՐ ՏՕՆԵՐ

—

Նոր-Տարի։ Փէրիացիք Նոր-Տարեան, բացի «ամանոր» կոչելուց, ասում են և «կաղանդ»։ Այդ օրը բոլոր գիւղացիները շտապում են եկեղեցի և պատարագից յետոյ խումբ-խումբ այցելում են քահանաների և քէդխուդաների տները տարին շնորհաւորելու.—«Շնորհաւոր ըլի Նոր-Տարին կամ կաղանդը, ամեն տարի բարով հասնիք». քէդխուդան պատասխանում է,—«Աղ ըլիք, ուրախութեան տարի ըլի, սուրբ Յարութեան արժանանաք». ապա թէյով հիւրասիրւում են։

Կաղանդի մասին այս գաղթականների մէջ լիշողութիւն ամենևին չի պահպանւել։

Ծնունդ եւ Մկրտութիւն։ Տեղական բարբառով «Զրօխնէք» է կոչւում։ Ծննդեան ժամերգութեան համարեա բոլոր գիւղացիները ներկայ են լինում, յատկապէս «Դանէլի» գրքի ժամանակ, որ կարդում են մանուկները. երեխաներից մէկը առանձին կանգնած կարդում է գրքի բուն պատմութիւնը, իսկ Սեդրաքի, Միսաքի և Աբէդնակովի մասերը արտասանում են երեք մանուկ միասին կանգնած։ Իսկ «Օրհնեցէք»ը երգում է ցածից խումբը։

Պատարագից յետոյ ժամաւորները վառած մոմերով վերադառնում են տուն և վառում ընթրիքի սեղանի վրայ, ուր պատրաստուած է լինում ուտելու և խմելու համար փլաւ, քուքու, գինի և օղի։